



Մայիսի 27-ին, առավոտից Թբիլիսիի Սուրբ Գեորգ եկեղեցին եւ նրա մերձակա տարածքը բուրում էր անուշահոտ վարդով, շնչում էր սայաթնովյան մեղմահունչ երգ ու երաժշտությամբ։ Վերստին Վարդատուն էր, վերստին Սայաթ-Նովան ու նրա երգն էր իշխում ամենուր։ Եվ առանձնահատուկ էր այս Վարդատունը, քանզի այն նվիրված էր Սայաթ-Նովա մեծ աշուղի ծննդյան 300-ամյակին, որը տոնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեծ հովանու ներքո։

Միջոցառումը կազմակերպել էին Վրաստանում ՀՀ դեսպանությունը, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմը՝ Վրաստանի նախագահի աշխատակազմի, Թբիլիսիի քաղաքապետարանի, Վրաստանի եւ ՀՀ մշակույթի նախարարությունների աջակցությամբ։ Այս տարվա Վարդատունը չէր սահմանափակվել միայն Թբիլիսիով եւ

